# ՀԱՅԱՍՏԱՆ

# “Կանաչ էներգիան” Շիրակի մարզում՝ “կանաչ” սոցիալ-տնտեսական առաջընթացի համար

Երրորդ բնություն ՀԿ

Բիոսոֆիա ՀԿ

FERTI CC NGO

HILFSWERK AUSTRIA INTERNATIONAL





## ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում: Այն երկրի ամենաաղքատ տարածաշրջանն է՝ գործազրկության ամենաբարձր մակարդակով: Բնակչության զգալի հատվածը կազմում են սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց հիմնական կարիքների ապահովումը՝ մատչելի ջեռուցումը, տաք և (կամ) մշտական խմելու ջրի մատակարարումը, հանդիսանում է առօրյա գերխնդիր: Նույնիսկ համայնքային շենքերը, ինչպիսիք դպրոցներն ու մանկապարտեզներն են, հաճախ չեն ապահոված մշտական ջեռուցմամբ և տաք ջրամատակարարմամբ՝ առաջ բերելով սանիտարական և առողջապահական խնդիրներ: “Կանաչ էներգիայի” վերաբերյալ իրազեկվածության մակարդակը շատ ցածր է, ինչպես նաև տեղական իշխանությունների, ՔՀԿ-ների և ընդհանրապես քաղաքացիների գիտելիքի պակասը, թե ինչպես այն կարող է օգնել լուծելու սոցիալ-տնտեսական խնդիրները:

## ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է վերականգնվող էներգիայի աղբյուրների հիման վրա ստեղծել կայուն զարգացմանը նպաստող պայմաններ, և դրանով իսկ ուղղակիորեն օժանդակել Շիրակի մարզում աղքատության նվազեցմանը: Ծրագրի կողմից կներդրվեն վերականգնվող էներգետիկայի տեխնոլոգիաներ (օրինակ, կենսագազի ստացման, արևային էներգիայով ոռոգման և ջրի թորման համակարգերը)՝ հանրային և մասնավոր օգտագործման համար, ինչպես նաև եկամտի աղբյուր հանդիսացող “կանաչ” օբյեկտներ (օրինակ, օդատաքացուցիչով ջերմոց, որը հնարավորություն կտա կլոր տարին բերք ստանալ): Բացի այդ, տեղական իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերին կտրամադրվի տեղեկատվություն ցածր ածխածնային տեխնոլոգիաների վերաբերյալ, որպեսզի փործի ներդրումն իրականացվի գործնական և ռազմավարական մակարդակով:

## ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մինչև 7 ցուցադրական տեղամասերի հիմնում
- Տեղական համայնքների ուսուցում և վարժանք
- Ուսուցողական այցեր և գործնական խորհրդատվության տրամադրում շահառու կողմերին (ՏԻՄ-եր, ձեռներեցներ, տեղի բնակչություն)
- Մինչև 13 համաֆինանսավորվող փոքր դրամաշնորհների ընձեռում համայնքներին, մասնավոր անձանց և գործարարներին
- Ինքնազբաղման հիման վրա 10 անձանց վերապատրաստում՝ որպես “կանաչ ծառայությունների մատուցողներ”
- Շիրակի մարզում «Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ռեսուրս-կենտրոնի» ստեղծում
- Աջակցություն տեղական իշխանություններին “կանաչ” սոցիալ-տնտեսական համալիր պլանավորման և բյուջետավորման գործընթացում
- “Կանաչ էներգետիկայի” հանրային իրազեկում Հայաստանում:

## ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

- 200 անձինք՝ Շիրակի մարզի ձեռնարկատերեր, կոոպերատիվներ և ֆերմերների խմբեր
- 15 տեղական համայնքներ
- 100 տեղական ինքնակառավարման մարմիններ և մարզային իշխանությունների ներկայացուցիչներ
- 30 կազմակերպություններ և Էներգետիկայի ոլորտի մասնագետներ:

## ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ժամանակահատված՝ մայիս 2015 – ապրիլ 2017

## ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

“Հիլֆսվերք Ավստրիա Ինթերնեշնլ” www.hilfswerk.at/hwa
“Զարգացման լուծումների ինստիտուտ” հիմնադրամ,
“Երրորդ բնություն” ՀԿ
“Բիոսոֆիա” ՀԿ
“Ֆերտի բարեգործական կենտրոն” ՀԿ

## ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

**Նիկոլ Մարիա Բաուեր**,
Ծրագրի տարածաշրջանային ղեկավար Հարավային Կովկասում
Հեռ.: +43 1 40 57 500-0, էլ.փոստ. nicole.bauer@hwa.or.at
http://www.hilfswerk.at/hwa/projekte

**Արսեն Կարապետյան,** Ծրագրի տեղական համակարգող
Բջջ. +374 98 40 14 15, էլ.փոստ. arskarapet@yahoo.com

**ՌաֆայելՄխիթարյան**, Համայնքային կազմակերպիչ
Բջջ. +374 94 53 58 59, էլ.փոստ.thirdnaturengo@yandex.ru

**Գևորգ Պետրոսյան**, Համայնքային կազմակերպիչ
Բջջ. +374 93 71 45 33, էլ.փոստ.biosophia@gmail.com

**Խաչիկ Սահակյան,** Տեխնիկական փորձագետ
Բջջ. +374 93 22 12 03, էլ.փոստ.fertingo@rabler.ru

## ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ

WITH FUNDING FROM AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

Լուսանկարները. “Երրորդ բնություն” և “Բիոսոֆիա” ՀԿ-ների